



# ԳՈՐԾԱՐԱՐԻ ՉԱՅՆ

Հոկտեմբեր-2011

Իրադարձություններ/Նորություններ/Հայտարարություններ /Հոդվածներ/Օրենսդրական փոփոխություններ  
**ԻՐԱԳԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ** **ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



## **Գործարար շահերի պաշտպանության ցանցի հերթական ժողովը**

Հոկտեմբերի 25-ին Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Գործարար շահերի պաշտպանության ցանցի հերթական ժողովը: Ժողովում քննարկվեց և հաստատվեց Ցանցի առաջիկա տարիների Ռազմավարությունը և շահերի պաշտպանության ոլորտում Ցանցի առաջնահերթ խնդիրները: Քննարկվեցին նաև ՀՀ ՓՄՁ խորհրդի նիստին ներկայացված հիմնխնդիրների վերաբերվող հարցեր: Ժողովի կողմից հավանություն արժանացավ ՓՄՁ խորհրդի առաջիկա նիստի քննարկմանն առաջադրվող հարցերի ցանկը:

## **Փոփոխություններ անշարժ գույքի կադաստրի ընթացակարգերում**

Համաձայն Հայաստանի Գործարար և ներդրումային միջավայրի «Գերազանցության կենտրոն» համագգային նախագծի հայեցակարգի Հայաստանը պետք է դառնա գործարար և ներդրումային միջավայրի «ԳԵՐԱՃԱՆՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» տարածաշրջանում լավագույն վայրը ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, բիզնես սկսելու ու զարգացնելու համար: Սույն հայեցակարգը մշակվել է հաշվի առնելով Համաշխարհային Բանկի «Գործարարությամբ զբաղվելը» ծրագրի աշխատանքային խմբի կողմից առաջարկվող արագ բարեփոխումներ իրականացնելու ստորև ներկայացվող մոտեցումները, որոնք վերաբերվում են «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման 10 ցուցանիշներից յուրաքանչյուրին:

- Մկսել պարզից՝ այն վարչարարական բարեփոխումներից, որոնք չեն պահանջում օրենսդրական փոփոխություններ:
- Կրճատել վարչական ընթացակարգերը՝ նվազագույնի հասցնելով գործարար-պետական պաշտոնյա շփումները:
- Ներդնել ստանդարտ դիմումի ձևեր և ապահովել օրենսդրական կարգավորման վերաբերյալ իրազեկվածությունը:
- Բարելավել օրենսդրական դաշտի կիրարկման վարչարարությունը:



*Գործարար շահերի պաշտպանության ցանցի հերթական ժողովը*

*Փոփոխություններ անշարժ գույքի կադաստրի ընթացակարգերում*

*Օրինագծերի փաթեթը նպաստելու է հարկային եկամուտների ավելացմանը*

*Հնարավոր է լրացուցիչ 60 մրդ դրամ ստանալ*

*Հայաստանը 6 կետով բարելավել է իր ցուցանիշը Doing Business զեկույցում*

*Համաշխարհային բանկը մատնանշում է, որ Հայաստանում հարկերի հավաքման տոկոսը պետք է բարձրացվի*

*Հարկերը 2012 թ. փոփոխության կենթարկվեն Ֆինանսների նախարար*

*Խորհրդակցություն Doing Business-ի բարելավման միջոցառումների վերաբերյալ*

*Գյուղատնտեսության զարգացման նպատակով Հայաստանում ներդրվելու են կառավարման նոր մեխանիզմներ*

*«Տեքստիլ և նորաձևություն 2011» առաջին միջազգային գործարար համաժողով*

*Նոյեմբերից Երևանում կգործարկվի «Գույքահարկի առցանց վճարման համակարգը»*

*Գյումրիում գործունեությունը դադարեցրած անհատ ձեռնարկատերերի թիվն աճել է*



Հայեցակարգում ներկայացվում են հստակ առաջարկություններ այնպիսի բարեփոխումների ուղղությամբ, որոնք հնարավոր է իրականացնել կարճաժամկետ հեռանկարում:

Գործարար շահերի պաշտպանության ցանցի անդամ «Փոքր և միջին բիզնեսի հիմնդրամի» կողմից դեռևս 2008թ. առաջարկվել է հայեցակարգում տեղ է գտել Իրավաբանական անձանց համար ընթացակարգերի կրճատման միջոցով վարձակալման գործընթացի պարզեցման առաջարկությունը: Իրավաբանական անձանց միջև վարձակալության պայմանագրի պարտադիր նոտարական վավերացման և կադաստրում պետական գրանցման պահանջը անհարկի բարդացնում էր գործընթացը և մեծացնում ծախսերը, քանի որ տնտեսական գործունեության բնույթից և շուկայի պայմաններից էլնելով ՓՄՁ սուբյեկտները հաճախ ստիպված էին լինում նոր տարածք վարձակալել: Արդյունքում ակնկալվում էր վարձակալման գործընթացի պարզեցում, տնտեսվարողների ծախսերի կրճատում:

(Նույն առաջարկությունը ի թիվս ՓՄՁ ոլորտի բարելավմանն ուղղված այլ առաջարկությունների, ներկայացվել է նաև 2011թ. ստեղծված ՀՀ Կառավարությանը կից փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի քննարկմանը):

Համաձայն Հայեցակարգի Ժամանակացույցի 2010թ.-ին պետք էր իրականացվեին՝

***Անշարժ գույքի կադաստրում գույքի նկատմամբ իրավունքների - սահմանափակումների պետական գրանցման ընթացակարգերի առցանց (էլեկտրոնային եղանակով) իրականացման, ինչպես նաև Անշարժ գույքի վարձակալության սահմանված ընթացակարգերի պարզեցման հնարավորությունները:***

Արդեն իսկ եկող տարվանից Անշարժ գույքի կադաստրում կկիրառվեն միասնական վճարներ և կիրականացվեն առանց նոտարի գործարքներ:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով վերացվել է վարձակալության պայմանագրի նոտարական վավերացման պայմանը՝ սահմանելով մեկ պատուհանի սկզբունք, որը գործում է ՀՀ կադաստրի պետական կոմիտեում: Միաժամանակ սահմանվել է միասնական վճար վարձակալության պայմանագրի գրանցման համար:

2012թ-ի հունվարից կմիասնականացվեն անշարժ գույքի կադաստրի համակարգում պետական գրանցման եւ տեղեկատվության տրամադրման ծառայությունների վճարները: Ներկայումս գանձվող վճարների չափը կախված է գույքի մակերեսի չափից, դրա տեղակայման վայրից: ***Եկող տարվանից պետական գրանցման միասնականացված վճարը կկազմի 25 հզ. դրամ, տեղեկատվության տրամադրման վճարը՝ 10 հզ. դրամ:***

Անշարժ գույքի գործարքը կողմերը կարող են կնքել կադաստրի պետական կոմիտեի որեւէ սպասարկման գրասենյակում՝ անկախ գույքի գտնվելու վայրից, հանձնելով այն պետական գրանցման: Ընդ որում, ստորագրությունների իսկության ճանաչմամբ գործարքի կնքման համար վճարումներ չեն նախատեսվում: Այսինքն, անշարժ գույքի գործարքի կնքումն ու գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումը տեղի կունենան մեկ ատյանում:

Եկող տարվանից կադաստրի համակարգում կգործեն նոր սպասարկման գրասենյակներ, որոնք կապահովեն քաղաքացիներից դիմումների ընդունումն ու ավարտական փաստաթղթերի (վկայականներ, տեղեկանքներ եւ այլն) տրամադրումը նրանց: Սպասարկման գրասենյակներ բացելու նպատակն է բացառել քաղաքացիների անմիջական շփումը պաշտոնատար անձանց հետ, նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը: Քաղաքացիները նաեւ հնարավորություն կունենան դիմումները ներկայացնել եւ դրանց պատասխանները ստանալ կադաստրի որեւէ սպասարկման գրասենյակից՝ անկախ գույքի գտնվելու վայրից: Էլեկտրոնային ստորագրություն ունեցող անձինք հնարավորություն կունենան դիմումները ներկայացնել առցանց կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական վեբ-կայքի միջոցով:

### ***Օրինագծերի փաթեթը նպաստելու է հարկային եկամուտների ավելացմանը***

Իր նիստում ՀՀ կառավարությունը հավանություն է տվել ՀՀ 2012թ. պետբյուջեի կատարումն ապահովող լրացուցիչ միջոցառումների վերաբերյալ հարկային և հարակից օրենքների նախագծերի փաթեթին, որն ուղղված է հարկային եկամուտների ավելացմանը, գործարար միջավայրի բարելավմանը և սովերային տնտեսության դեմ պայքարին: Վարչապետ Տիգրան Սարգսյանի դիտարկմամբ, մասնավորապես, մաքսային օրենսդրության առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ անհրաժեշտ է Եվրամիության փորձագետների եզրակացությունը, քանի որ դրանք պետք է համապատասխանեն եվրոպական չափանիշներին: Բացի այդ, պետք է հաշվի առնվեն Ազգային ժողովի կապիցիոն գործընկերների առաջարկություններն ու դիտողությունները, այնուհետև քննարկման արդյունքներն ամփոփվեն ՀՀ Նախագահի մոտ հրավիրվելիք խորհրդակցությունում:

27.10.2011  
gov.am

### ***Հնարավոր է լրացուցիչ 60 մլրդ դրամ ստանալ***

#### ***Ստվերային ոլորտների պակաս չունենք***

2012-ին 101 մլրդ դրամով ավելի հարկեր հավաքելու խնդիրը տարատեսակ քննարկումների պատճառ է հանդիսացել: Պետական եկամուտների կոմիտեի նախագահը կառավարության նիստի ժամանակ չթաքցրեց իր դժգոհությունը այս հեռանկարից եւ պետական բյուջեի նախագիծը ներկայացնող ֆինանսների փոխնախարար Պավել Սաֆարյանին խնդրեց

ներկայացնել, թե ի՞նչ ռեսուրսների հաշվին դա պետք է կատարվի: Որոշ փորձագետներ նույնպես դժվար իրականացնել են համարում հարկային եկամուտների և սոցվճարների այդ չափով հավաքելը, անկախ նրանից, որ ստվերային տնտեսության

ծավալները մեր երկրում դեռ բավականին մեծ են: Նրանց կարծիքով, հարկայինները կցնան փորձված ճանապարհով փոքր բիզնեսի վրա տույժ ու տուգանքներ կիրառելու միջոցով փորձելով ապահովել լրացուցիչ հարկային մուտքերը:

Կառավարության նիստի ժամանակ, պետեկամուտների կոմիտեի նախագահի բարձրացրած հարցի առնչությամբ պարզաբանումներ տվեց վարչապետ Տիգրան Սարգսյանը: Նա փաստեց, որ մեկ տարվա մեջ 0,6 տոկոսով հարկեր-ՀՆԱ ցուցանիշը բարձրացնելը լուրջ խնդիր է, այն դեպքում, երբ միջնաժամկետ ծախսային ծրագրով սովորաբար նախատեսվում էր 0,3-0,4 տոկոս բարձրացում: Նշված պահանջի կատարումը վարչապետը պայմանավորեց ԵՄ և այլ դոնոր կազմակերպությունների հետ ձեռք բերված պայմանավորվածությամբ՝ որքան շատ հարկեր ենք հավաքում, այնքան շատ աջակցություն ենք ստանում նրանցից:

Նշենք, որ միջնաժամկետ ծախսային ծրագրով 2013-ին էր նախատեսված հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը հասցնել 17,4 տոկոսի, իսկ 2012-ի համար այդ ցուցանիշը պետք է կազմեր 17 տոկոս: Այս մասին «Ազգին» տված հարցազրույցում («3-րդ և 4-րդ երեխայի ծննդյան դեպքում 2014-ից կտրվի 1 մլն դրամ», 16.07.2011թ.) ասել էր ֆինանսների փոխնախարար Պավել Մաֆարյանը : Այսինքն, մեկ տարի ավելի շուտ այս ցուցանիշին հասնելու խնդիր է դրված:

Տիգրան Սարգսյանը հարկային բազայի այդչափ ավելացումը լուրջ մարտահրավեր էր համարել, նշելով, որ 101 մլրդ դրամից հարկային վարչարարության բարելավման հաշվին պետք է հավաքվի լրացուցիչ 10-15 մլրդ դրամ, 40-50 մլրդ դրամ էլ տնտեսական աճի և նոր ստեղծված արժեքի հաշվին:

Եվ մոտ 60 մլրդ դրամ էլ պետք է հավաքվի ստվերային տնտեսության նվազեցման հաշվին: Ըստ վարչապետի, այս խնդրի լուծման համար հարկային օրենսդրության փոփոխությունների փաթեթ է նախատեսվում հարկային բազան ավելացնելու և հարկային վարչարարությունը բարելավելու նպատակով: Միաժամանակ, նախարարների առջև պատասխանատվություն դրվեց ոլորտների հարկման բազայի համար:

Չնայած Տիգրան Սարգսյանը նաև զգուշացրել էր, որ այդ ամենն այնպես պետք է արվի, որ հարկային բազայի ավելացումը չխտընդոտի տնտեսության զարգացմանը, վերելում նշված մտահոգությունները պահպանվում են:

Գործարարների տեսակետն այս հարցի շուրջ ներկայացրել էր Հայաստանի գործարարների և արդյունաբերողների միության նախագահ Արսեն Ղազարյանը: Նա նշել էր, որ գործարարները չեն կարծում, թե 101 մլրդ դրամի ավելացումը մեծ բեռ է, բայց եթե դա ստվերից է նվազելու, եթե հարկումն արվելու է հավասարաչափ, եթե արտոնյալ ոլորտների քանակը նվազելու է և եթե փոքր ու միջին բիզնեսը չի վնասվելու: Ըստ Արսեն Ղազարյանի, այդ մասին գործարարները ասել են Հայաստանի նախագահի հետ հանդիպման ժամանակ:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ հարկային լրացուցիչ եկամուտների հավաքումը թեև բարդ է, բայց անկարելի կամ այնքան դժվար չէ, որքան փորձում են ներկայացնել պետական եկամուտների կոմիտեի ղեկավարները: Բնական է, որ հարկահավաքները պետք է առարկեն իրենց առջև դրվող դժվար լուծելի խնդիրների կապակցությամբ: Սակայն մյուս կողմից էլ, գաղտնիք չէ, որ ստվերային տնտեսության ծավալներով Հայաստանը մշտապես առաջին տեղում է եղել ԱՂՀ երկրների շարքում, ինչի մասին փաստում է Հայաստանի ՀՆԱ-հարկեր հարաբերակցության մշտապես ամենացածր ցուցանիշը և, որ նման պատկերի հիմնական պատասխանատուն հենց հարկային կառույցն է:

Վերջին տարիներին ստվերային տնտեսության հայտնաբերման ուղղությամբ կառավարության, այդ թվում՝ պետական եկամուտների կոմիտեի ջանքերին մեր թերթում բազմիցս անդրադարձել ենք և մշտապես աջակցել: Հակառակ առևտրականների դժգոհություններին, մեր թերթում կարելու էր փաստաթղթաշրջանառության բացահայտման նպատակով ՀԴՄ-ներ տեղադրելու անհրաժեշտությունը, դրանց կտրոնների դիմաց բռնուսների տրամադրումը, որն ի վերջո նպատակ ուներ ներգրավել հասարակությանը ստվերի բացահայտմանը: Սակայն այդ գործընթացն անհաջողությամբ մատնվեց և տոնավաճառների շրջանառությունն այժմ էլ մեծապես ստվերում է:

Հարկերի լրացուցիչ հավաքման ոլորտներից կարելի է հիշատակել հանքարդյունաբերությունը: Համաշխարհային բանկն առաջարկել էր հարկային փոփոխություններ, ըստ որի, հանքարդյունաբերական ընկերությունները բնապահպանական վճարները պետք է վճարեին միջազգային գների փոփոխություններին համարժեք սանդղակով: Մինչ այժմ այս օրենքը ընդունված չէ:

Շինանյութերի շուկան ահռելի ստվերում է: Հիշատակենք քարհանքերի դաժան և ստվերային շահագործումը, ցեմենտի, գաջի, ավազի մեծապես ստվերային արտադրությունը և գրեթե անվերահսկելի վաճառքը: Հայտնի է, որ այս ոլորտները հիմնականում պատկանում են օլիգարխներին: Նույնը կարելի է ասել նաև առաջին անհրաժեշտության սննդամթերքի ներմուծման վերաբերյալ: Վերոնշյալ ոլորտները հենց այն օլիգոպոլիաներն են, որոնք ոչ միայն սահմանափակում են տնտեսական մրցակցությունը, այլև ստվերային մեծածավալ շջանառություն իրականացնում: Նույն օլիգարխներից գրեթե յուրաքանչյուրն ունի սեփական ռեստորանը կամ հանգստի ու զվարճանքի այլ օբյեկտներ, որոնք նույնպես, մեղմ ասած, լիարժեք չեն հարկվում: Այսինքն, լրացուցիչ հարկեր հավաքելու ևս մեկ դաշտ:

Այնպես որ, առանց փոքր բիզնեսին անհանգստացնելու հարկային մուտքերն ավելացնելու տեղեր կան, և կարծում ենք՝ պետեկամուտների կոմիտեում բոլորից լավ գիտեն այդ տեղերը: Հաշվարկների խնդիր է, իհարկե, թե այս ոլորտներում քիչ թե շատ լիարժեք հարկելու դեպքում հնարավոր կլինի՝ ապահովել լրացուցիչ պահանջվող 60 մլրդ դրամը: Սակայն եթե փորձագիտական տարբեր գնահատականներով ստվերային շրջանառությունը գտնվում է 30-60 տոկոսի սահմաններում, ապա հստակ է, որ դա հնարավոր է:

Մյուս կողմից էլ ժամանակն է, որ հայ գործարարները ևս հասկանան, որ պարտադիր չէ, որ բիզնեսի շահութաբերությունը 100 տոկոս կազմի՝ հաջող համարվելու համար, որ այդ շահութից իրենք պարտավոր են բաժին հանել պետությանը, իրենց աշխատակիցներին, զբաղվել բարեգործությամբ, որ նրանք չեն կարող հարստանալ հասարակության այլ խավերի հաշվին, առանց նրանց համար մասնաճանաչումներ կատարելու:

**Արա Մարտիրոսյան**

25.10.2011

Azg.am

**Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից հրապարակած Doing Business 2012 զեկույցի համաձայն, Հայաստանը 6 կետով բարելավել է իր ցուցանիշը և աշխարհի 183 պետությունների շարքում զբաղեցնում է 55-րդ հորիզոնականը:**

Նախորդ զեկույցում` Doing Business 2011, Հայաստանը 61-րդ տեղում էր:

Doing Business 2012 զեկույցը գնահատել է 2010թ. հունիս-2011թ. մայիս ընկած ժամանակահատվածում պետությունների կողմից իրականացված բարեփոխումները, որոնք դյուրացնում են սովյալ երկրներում գործարարությամբ զբաղվելը:

Ըստ զեկույցի, իր չորս հարեաններից Հայաստանը զիջում է միայն Վրաստանին, որը Doing Business 2012-ում զբաղեցնում է 16-րդ հորիզոնականը: Ադրբեջանը 66-րդ տեղում է, Թուրքիան` 71-րդ, Իրանը` 144-րդ:

Հետխորհրդային երկրների շարքում Հայաստանը վեցերորդն է` Վրաստանից, Լատվիայից, Էստոնիայից, Լիտվայից և Ղազախստանից հետո:

«Հատկանշական է կարելու է, որ մենք մեր բարեփոխումների քանակով զբաղեցնում ենք առաջին տեղը: 183 երկրների շրջանակում Համաշխարհային բանկը գնահատել է, որ 5 ոլորտներում մենք ունենք էական բարելավումներ և միակն ենք այդ 183 երկրների մեջ, որի 5 բարեփոխումներ գնահատվել են դրական: Մենք ԱՊՀ երկրներում այս ցուցանիշով երկրորդն ենք` զիջում ենք այսօր Ղազախստանին»,- կառավարության այսօրվա նիստում, անդրադառնալով Doing Business 2012 զեկույցին, նշեց վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից Doing Business զեկույցը հրապարակվում է յուրաքանչյուր տարի: Doing Business 2012-ը թվով իններորդն է:

**Մարգին Հարությունյան**

20.10.2011  
Azatutyun.am

**Համաշխարհային բանկը մատնանշում է, որ Հայաստանում հարկերի հավաքման տոկոսը պետք է բարձրացվի**

Համաշխարհային բանկի նոր զեկույցը արձանագրում է, որ հարկային համակարգում արդյունավետ բարեփոխումներ են անհրաժեշտ:

Համաշխարհային բանկի Եվրոպա և Կենտրոնական Ասիա տարածաշրջանի Աղքատության կրճատման և տնտեսական կառավարման ստորաբաժանման ոլորտային տնօրեն Իվոն Ցիկատայի խոսքով, հարկային համակարգում Հայաստանում արդյունավետ բարեփոխումներ են անհրաժեշտ` հարկերի հավաքման տոկոսը բարձրացնելու համար: Այս տարածաշրջանում հարկերի հավաքման տոկոսային ցուցանիշը ամենացածրերից է, պետք է ջանքեր ուղղվեն սովետական տնտեսության դեմ պայքարի, ակցիզային հարկերի, հանքարդյունահանման և չափազանց մեծ հարկային արտոնությունների ուղղությամբ, կարծում են ՀԲ-ի «Հայաստան` պետական ծախսերի ուսումնասիրություն` հարկաբյուջետային կոնսուլտացում և վերականգնում» զեկույցի հեղինակները:

«Տարվա առաջին կիսամյակում երկրի կատարողականը բավականին բարձր էր` տարածաշրջանի մյուս երկրների համեմատ, ՀՆԱ-ի 4 տոկոս ցուցանիշ է գրանցվել, բարելավվել են տնտեսությանը տրվող վարկերը: Այլ երկրների նման` վերջին ճգնաժամը հաղթահարելու համար վճարված արժեքը առաջացրել է լրացուցիչ ծախսեր, ինչը սովորական պրակտիկա չէ այս երկրների համար, այդ պատճառով էլ այժմ մենք շեշտը դնում ենք առաջընթացի, դինամիկայի վրա», - այսօր Երևանում ներկայացնելով զեկույցը` նշեց Իվոն Ցիկատան:

Հայաստանի ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանի խոսքով, զեկույցը կարելու է Հայաստանի համար: Իր տեսակի մեջ այն երկրորդն է, նախորդ նմանատիպ զեկույցը 2000-ականների սկզբին էր հրապարակվել ու Հայաստանում առաջացրել էր ակտիվ քննարկումներ` միաժամանակ զգալի ազդեցություն թողնելով: Այն հարցին, թե ինչու են հարկերի հավաքման տոկոսը բարձրացնում ոչ թե սովետական տնտեսությունից ձեռքազատվելու, այլ հարկատուների համար լրացուցիչ հարկեր սահմանելու միջոցով, ֆինանսների նախարարը պատասխանեց, որ, օրինակ, ակցիզային հարկերը պետք է բարձրացվեն ապրանքի թանկացմանը զուգահեռ:

«Մենք ունենք հետեյալ պատկերը, մասնավորապես, հարց էր դրվում, որ ակցիզներից Հայաստանում քիչ է հավաքվում և այդ եկամուտը ընկնում է: Հիմա, եթե մենք ակցիզների դրույքների վերանայում կատարենք, համապատասխանորեն այդ սպեցիֆիկ ակցիզի գինը բարձրացնենք, արդյոք սա նշանակո՞ւմ է, որ դա հարկադրույքների բարձրացում է: Ոչ: Դա ուղղակի նշանակում է ճշգրտում տնտեսական իրականության հետ», - պարզաբանեց ֆինանսների նախարարը:

Վաչե Գաբրիելյանը հավելեց, որ հարկերի հավաքման տոկոսայնությունը կբարձրացնեն նաև մի շարք փոփոխություններ, բարեփոխումներ, որոնք Համաշխարհային բանկը և ֆինանսների նախարարությունը միասին են մշակել: Օրինակ, կփոխվի հանքարդյունաբերության հարկման ռեժիմը: Ազգային ժողովի հաջորդ քառօրյա մտնող և այս պահին քննարկվող օրենքը նախատեսում է հանքարդյունաբերման ոլորտում բարձր եկամուտներ և, միաժամանակ, օտարերկրյա ներդրողների խրախուսում: Սակայն հնարավոր են նաև ժամանակավոր ծախսեր` կապված գործարար միջավայրի բարելավման հետ: Կառավարությունը նախատեսում է գնալ ժամանակավոր զիջումների, որոնք հետագայում պետք է փոխհատուցվեն:

«Բնականաբար հարկային վարչարարության բարեփոխումները չեն կարող վտանգել հարկային եկամուտների հավաքագրումը: Կարծում եմ, որ կարելուք այստեղ այն համատեքստում է, որտեղ տվյալ միտքը արտահայտվել է՝ գործարար միջավայրի բարելավման համատեքստում որոշակի միջոցառումներ կարող են ժամանակային ծախս լինել կառավարության համար կոնկրետ տվյալ ժամանակահատվածի համար՝ հետագայում, բնականաբար, ավելի քան փոխհատուցելով այդ ծախսերը», - նշեց ֆինանսների նախարարը:

Այս ամռանն էլ հայտարարվեց, որ առաջիկա երկու տարիների համար Համաշխարհային բանկը նախատեսում է Հայաստանին տրամադրել 200 միլիոն դոլարի նոր վարկային փաթեթ, որը միտված կլինի տնտեսական աճի պահպանմանն ու խոցելի խմբերի կարիքները հոգալուն:

Համաշխարհային բանկի ներկայացուցիչների կարծիքով, հնարավոր տնտեսական ճգնաժամի երկրորդ փուլը շատ մեծ ազդեցություն չի ունենա Հայաստանի վրա, քանի որ մենք սերտ առևտրային կապեր չունենք ճգնաժամի թիրախ հունաստանի հետ, բանկային համակարգը նույնպես այդ երկրից կախվածություն չունի, ինչպես նաև արժույթային տեսանկյունից՝ եվրոն Հայաստանում ամենագործածելի տարադրամը չէ:

«Հայաստանը խոցելիության տեսանկյունից առաջնային դիրք չի գրավում, չնայած եթե համաշխարհային ճգնաժամի երկրորդ փուլը գրանցվի, ապա ոչ անմիջական ազդեցություն կլինի: Եթե նավթի գներն իջնեն, Ռուսաստանը ենթարկվի ճգնաժամի անմիջական ազդեցության, ապա Հայաստանի տնտեսական աճի, պահանջարկի վրա դա իհարկե կազդի, բայց ներկայումս Հայաստանը ամենաառաջնային խոցելի դիրքում չէ: Վտանգն այս պահին Հայաստանում չէ, այլ այնտեղ՝ հարավարևելյան Եվրոպայում», - նշեց Համաշխարհային բանկի ներկայացուցիչը:

Հիշեցնենք՝ օրեր առաջ Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ղեկավար Ժան-Միշել Հապին իր ելույթում նշել էր, որ Հայաստանի տնտեսությունը դեմ առ դեմ կանգնած է եվրագոտու ճգնաժամից առաջացած խառնաշփոթի առջև: Նախագահ Սերժ Սարգսյանը չէր համաձայնել հնչեցրած մտքին՝ ասելով, թե դեռ որեւէ մեկը չի բնորոշել, որ ճգնաժամի երկրորդ փուլը Հայաստանում արդեն առկա է:

Էլինա Չիլինգարյան

18.10.2011

Azatutyun.am

### **Հարկերը 2012 թ. փոփոխության կենթարկվեն. Ֆինանսների նախարար**

Հայաստանի կառավարությունը քննարկում է հարկային փոփոխությունների նոր փաթեթը, որն, ամենայն հավանականությամբ, հոկտեմբերի վերջին կողարկվի խորհրդարան: Այդ մասին այսօր՝ հոկտեմբերի 18-ին, լրագրողներին ասաց ՀՀ ֆինանսների նախարար Վաչե Գաբրիլյանը: Նրա խոսքով՝ քննարկվում են ինչպես հարկային բեռի մեծացման, այնպես էլ ստվերի կրճատման հաշվին հարկային հավաքագրումների ավելացման հնարավորությունները:

Մասնավորապես՝ նախատեսվում է ակցիզային դրույքների վերանայում: Քանի որ որոշ ակցիզներ հաստատագրված վճարների տեսքով են եղել, գների բարձրացումից հետո կարիք կա դրանք վերանայել: «Օրինակ՝ կան ապրանքներ, որոնց գինը 100 միավոր էր, իսկ ակցիզը՝ 10 դրամ: Հիմա գինը բարձրացել է 180 դրամ, բայց ակցիզը նույն 10 դրամն է մնացել: Եթե այդ ակցիզը բարձրացնենք, դա հարկի բարձրացում չէ, այլ ճշգրտում», - ասաց Վ. Գաբրիլյանը:

Բացի այդ, նախարարի խոսքով, ԱԺ-ում շրջանառության մեջ է գտնվում հանքարդյունաբերության մեջ հարկային ռեժիմի փոփոխության վերաբերյալ օրինագիծ, որը նույնպես կարելի է հարկային նոր փաթեթի մաս համարել: Դրանով ճշգրտվում է ռոյալթիների ռեժիմը, որը ոչ միայն բյուջեի համար կապահովի եկամուտների աճ, այլև կխրախուսի օտարերկրյա ներդրումների մուտքը:

18.09.2011

news.am

### **Խորհրդակցություն Doing Business-ի բարելավման միջոցառումների վերաբերյալ**

Այսօր կառավարությունում, վարչապետ Տիգրան Սարգսյանի նախագահությամբ, տեղի է ունեցել խորհրդակցություն՝ նվիրված Հայաստանի գործարար միջավայրի բարելավմանը:

Մինչ քննարկմանն անցնելը կառավարության ղեկավարը նշել է. «Մեր այսօրվա խորհրդակցությունը նվիրված է բիզնես միջավայրի բարելավման ծրագրի իրականացմանը: Մենք պետք է անցնենք ծրագրված միջոցառումների ցանկով, տեսնենք՝ ինչպես են դրանք իրականացվում, որպեսզի փուլ առ փուլ Հայաստանի Հանրապետությունում կարողանանք բարելավել բիզնես միջավայրը»:

Խորհրդակցության ժամանակ ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կարինե Մինասյանը ներկայացրել է Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագիրը՝ լրամշակված շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների առաջարկներով: Նա տեղեկացրել է, որ ծրագրում հիմնականում ներառված են պետական մարմինների գործառնությունները թվայնացնող միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան քաղաքացիներին էլեկտրոնային եղանակով առցանց օգտվել պետական ծառայություններից, ինչը բիզնես միջավայրի բարելավման լավագույն ճանապարհն է:

Ծավալված մտքերի փոխանակության ընթացքում արծարծվել են բիզնես սկսելու և զարգացնելու համար պահանջվող վարչարարական ընթացակարգերի պարզեցմանը, հարկային և մաքսային քաղաքականության իրականացմանը, արտաքին առևտրի և փոքր ու միջին ձեռնարկությունների աճի խթանմանը վերաբերող հարցեր: Մասնավորապես, քննարկվել են հարկերի վճարման վարչարարության, արտաքին առևտրի, ներդրողների պաշտպանվածության, շինարարական

թույլտվությունների ստացման, ընկերությունների հիմնադրման և փակման, վարկերի հասանելիության, նոր բիզնես սկսելու և սեփականության գրանցման ցուցանիշների բարելավման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները: Ի կատարումն ներկայացված ծրագրով նախատեսված միջոցառումների, վարչապետ Սարգսյանը համապատասխան հանձնարարականներ է տվել պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարներին: 14.10.2011 gov.am

**Գյուղատնտեսության զարգացման նպատակով Հայաստանում ներդրվելու են կառավարման նոր մեխանիզմներ**

Վարչապետ Տիգրան Սարգսյանն այսօր մասնակցել է Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում անցկացվող հայ ֆերմերների առաջին համաշխարհային «Հայագրոֆորում» երկօրյա համաժողովի բացմանը: Ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ վարչապետը նշել է, որ դրա անցկացումը կառավարությունը դիտում է որպես ագրարային ոլորտում միջազգային համագործակցության զարգացման ուղղված կարևորագույն քայլ: Անդրադառնալով ագրարային ոլորտին՝ Տիգրան Սարգսյանը նշել է, որ այստեղ առկա են նկատելի հիմնահարցեր և նույնքան նկատելի ձեռքբերումներ. **«Անցած 20 տարիների ընթացքում մենք անցել ենք դժվարին ճանապարհ և ունենք բազմաթիվ հիմնախնդիրներ: Մենք պետք է միասնաբար բացահայտենք գյուղատնտեսության ոլորտում առկա ներուժը՝ այն մեր ժողովրդի կարիքների բավարարմանը ծառայեցնելու համար: Այս տեսակետից, Հանրապետության նախագահի նախընտրական ծրագրում առկա էր կարևորագույն սկզբունք՝ ապահովել Հայաստանի տարածքային համաչափ զարգացումը: Հասկանալի է, որ այս նպատակին հնարավոր չի լինի հասնել, եթե մենք չարդիականացնենք մեր երկրի գյուղատնտեսությունը: Ժամանակակից աշխարհը տեղեկատվական տեխնոլոգիաների և գիտության զարգացմամբ գյուղատնտեսության զարգացման համար ստեղծում է նոր և բացառիկ հնարավորություններ»:** Նշելով, որ մեր երկրում այսօր առկա է շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսություն և 430 հազար հեկտար մշակովի հող, վարչապետն ասել է, որ մեկ տնտեսությանը բաժին ընկնող հողատարածքների ծավալը բավականին փոքր է: **«Մեր ծրագրերը մշակելիս մենք պետք է մտածենք, թե այս իրողության պայմաններում ինչպես պետք է կազմակերպենք արդյունավետ զարգացում գյուղատնտեսության համար: Այդ տեսակետից, կարևորում են կառավարության հաստատած գյուղատնտեսության զարգացման հայեցակարգը, որը քննարկվել է Հանրային խորհրդի, գյուղացիական տարբեր մասնագիտական միավորումների և գիտահետազոտական ինստիտուտների հետ: Փորձել ենք այդ փաստաթղթում ներառել ժամանակակից գյուղատնտեսության կազմակերպման բոլոր սկզբունքները: Այն ներառում է ոչ միայն գյուղատնտեսության, այլև գյուղի զարգացումը»:**

Տիգրան Սարգսյանը նշել է, որ ժամանակակից աշխարհը թելադրում է, որպեսզի գյուղատնտեսության զարգացումը դիտարկվի գյուղի հիմնախնդիրներին զուգահեռ: **«Այսինքն, մեր խնդիրն է գյուղացու կյանքը դարձնել հարմարավետ: Կառավարության առջև ծառայած խնդիրներից մեկն էլ գյուղը ժամանակակից ենթակառուցվածքներով ապահովելն է՝ ճանապարհների, խմելու և ոռոգման ջրի համակարգերի կառուցումը և այլն: Հասկանալի է, որ այս ենթակառուցվածքների ձևավորումը գյուղացու համար բացահայտելու է նոր հնարավորություններ և հեռանկարներ»:** Կարևորելով միջազգային կազմակերպությունների հետ իրականացվող գյուղատնտեսական ծրագրերի կազմակերպումը՝ կառավարության ղեկավարն ասել է, որ շնորհիվ այդ ծրագրերի՝ գյուղացիներն ստանում են նոր գիտելիքներ, գյուղտեխնիկա և այլն: Վարչապետն ընդգծել է, որ 2012 թվականը նույնպես հռչակվելու է գյուղատնտեսության զարգացման տարի: Հանրապետության 55 համայնքներում Համաշխարհային բանկի օժանդակությամբ ներդրվելու են կառավարման նոր մեխանիզմներ և ձևավորվելու են կոոպերատիվներ: **«Նխօրհանելու է կոոպերացիան, ինչը կբարձրացնի գյուղատնտեսության արդյունավետությունը տարեկան առնվազն 30 տոկոսով»**, - նշել է Տիգրան Սարգսյանը՝ ավելացնելով, որ պետությունը գյուղտեխնիկայի ձեռքբերումը համաֆինանսավորելու է 50 տոկոսով: Նրա տեղեկացմամբ՝ նմանատիպ միջոցառումներ իրականացվելու են նաև գյուղատնտեսության բոլոր բնագավառներում՝ սկսած սերմնաբուծությունից, ավարտած այգիների կառավարմամբ:

Վարչապետը հույս է հայտնել, որ «Ագրոֆորումի» անցկացումը ևս կնպաստի մեր երկրում գյուղատնտեսության զարգացմանը:

Համաժողովի շրջանակում կքննարկվեն Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում տեղի ունեցող զարգացումները, առկա խնդիրներն ու իրականացվող ծրագրերը: Համաժողովը հնարավորություն է ընձեռում հայաստանյան և սփյուռքահայ, ինչպես նաև տարբեր երկրներից ժամանած օտարերկրյա գործարարներին ներկայացնելու իրենց արտադրատեսակներն ու մատուցվող ծառայությունները, հաստատելու փոխշահավետ համագործակցություն, ծանոթանալու գյուղատնտեսության ոլորտում Հայաստանում առկա ներդրումային հնարավորություններին և գյուղատնտեսության զարգացման միջազգային առաջադեմ փորձին: Համաժողովի նպատակն է ագրոպարենային բնագավառի գործարարների և ֆերմերների համահայկական ընկերակցության ստեղծումը:

Հայաստանում առաջին անգամ ՀՀ կառավարության որոշմամբ՝ յուրաքանչյուր տարի հոկտեմբեր ամսվա երրորդ կիրակի օրը նշվելու է որպես «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության աշխատողի օր», որն այս տարի համընկնում է համաժողովի անցկացման հետ: Այս կապակցությամբ մայրաքաղաքում և Հայաստանի մարզերում անցկացվելու են տարբեր միջոցառումներ՝ տոնավաճառներ, ցուցահանդեսներ և այլն:

14.10.2011 gov.am

**«Տեքստիլ և նորաձևություն 2011» առաջին միջազգային գործարար համաժողով**

Հոկտեմբերի 14-ին «Մոսկվայի տուն» մշակութային-գործարար կենտրոնում կայացավ «Տեքստիլ և նորաձևություն 2011» խորագրով առաջին միջազգային գործարար համաժողովը և մեկնարկեց տեքստիլ արտադրանքի ցուցահանդեսը:

Միջոցառմանը մասնակցեցին և խոսքով հանդես եկան ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար

Տիգրան Դավթյանը և Միջազգային արդյունաբերական համագործակցության կենտրոնի (UNIDO) տեխնոլոգիական համագործակցության և ծրագրերի մշակման բաժնի տնօրեն Մուհամեդ-Լամին Դամին:

Համաժողովի նպատակն էր վերհանել Հայաստանի տեքստիլ ոլորտի մրցակցային առավելությունները, բացահայտել արտադրության արդիականացման և զարգացման հնարավորությունները, ինչպես նաև ստեղծել միջազգային գործարար նոր կապեր և ամրապնդել համագործակցությունը գործընկերների հետ:

Գործարար համաժողովի կազմակերպիչն էր Զարգացման հայկական գործակալությունը՝ Միջազգային արդյունաբերական համագործակցության կենտրոնի (UNIDO), Կովկասյան զարգացման գործարարության կենտրոն - Քաղաքացիական հասարակության և տարածաշրջանային առաջընթացի ինստիտուտի, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության և «Ատեքս» նորաձևության կենտրոնի հետ համատեղ:

Համաժողովին մասնակցեցին ոլորտի ավելի քան 40 տեղական ներկայացուցիչներ, միջազգային փորձագետներ, ինչպես նաև արտադրողներ և ոլորտի ներկայացուցիչներ Եվրասիական տնտեսական համագործակցության, Հարավային Կովկասի ու ԵՄ երկրներից:

Միջոցառման շրջանակներում կազմակերպվեցին նաև կլոր սեղաններ՝ «ՄԱԱԶԿ-ի արդյունաբերական զարգացման ծրագրի տեքստիլ արդյունաբերության արդիականացման մեթոդաբան» և «Տնտեսական համագործակցության հիմնական ուղղությունները և հեռանկարները Հարավային Կովկասում» թեմաներով:

Միջոցառման ավարտին հայ դիզայներները ցուցադրեցին նորաձևության հավաքածուներ:

14.10.2011

mineconomy.am

### **Նույեմբերից Երեւանում կգործարկվի «Գույքահարկի առցանց վճարման համակարգը»**

Առաջիկայում, Երեւանում, կգործարկվի «Գույքահարկի առցանց վճարման համակարգը»: Երեւանի բոլոր այն բնակիչները, ովքեր ունեն անշարժ կամ շարժական գույք՝ կկարողանան համապատասխան հարկային պարտավորություններին ծանոթանալ եւ վճարումներ կատարել «Գույքահարկի առցանց վճարման համակարգի» միջոցով:

Քաղաքապետարանի մամուլի ծառայությունից news.am-ին հայտնում են, որ այս աշխատանքների ընթացքի եւ գործարկման փուլի մասին Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանին զեկուցվել է հերթական աշխատանքային խորհրդակցության ժամանակ:

«Երեւան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ներկայացմամբ, ծրագիրը կգործարկվի նույեմբերի սկզբին: Զուգահեռաբար բանակցություններ են վարվում տարբեր բանկերի հետ՝ ծրագիրը նաեւ բանկային համակարգում կիրառելու ուղղությամբ:

10.10.2011

news.am

### **Գյումրիում գործունեությունը դադարեցրած անհատ ձեռնարկատերերի թիվն աճել է**

Գյումրիում, ընթացիկ տարվա 9 ամիսների ընթացքում, 445 հարկ վճարող անհատ ձեռնարկատեր դադարեցրել է իր գործունեությունը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է հատկապես այն անհատ ձեռնարկատերերի թիվը, ովքեր ժամանակավորապես իրենց պետական գրանցման վկայականը հանձնել են: ՊԵԿ հարկային տեսչություն Գյումրիի կառույցում համարում են են, որ նշված փաստը պայմանավորված է օբյեկտիվ գործոններով: Իսկ, թե ինչով է պայմանավորված տնտեսվարողների գործունեության դադարեցումը հարցին, ՊԵԿ Գյումրիի հարկային ծառայության պետի տեղակալ Աշոտ Ավագյանը, նշել է, թե այդ հարցը հարկային կառույցում չեն քննարկում:

«Այն տնտեսվարող սուբյեկտը, ով կթաքցնի իր իրական եկամուտները, նախ կտուգանվի, այնուհետեւ ընդհանրապես կդադարեցվի վերջինիս ձեռնարկատիրական գործունեությունը», - ասել է նա:

Իսկ Գյումրիում հարկային կոշտ քաղաքականությունից շարունակում են դժգոհել հատկապես մանր առևտրով զբաղվողները: Տոնավաճառի առևտրականների հավաստմամբ, շրջայցերի թիվը վերջին շրջանում ավելացել է: Հարկային տեսչության աշխատակիցները գրեթե ամեն օր ստուգումներ են իրականացնում, եւ տուգանում աշխատողներին: Շատերին այլ ելք չի մնացել, քան փակել տաղավարն ու հեռանալ, մի քանիսն էլ դրանք վարձակալության են հանձնել:

Նշենք նաև, որ շուրջ 700 անհատ ձեռնարկատերի փաստաթղթեր, ովքեր 2008 թվականից չեն կատարել իրենց հարկային պարտավորությունները, Գյումրիի տարածքային հարկային տեսչությունն ուղարկել է պետական եկամուտների կոմիտե: Կառավարության համապատասխան որոշմամբ, այդ անհատ ձեռնարկատերերը, հնարավորություն կունենան պայմանագիր կնքել հարկային տեսչության հետ, իսկ հրաժարվելու կամ չներկայանալու դեպքում հարցը կկարգավորվի դատական կարգով:

05.10.2011

news.am

### **ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՅԻՆ**

*Սույն տեղեկագրի թողարկումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ Ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի , և ԱՄՆ բնակչության առտառաձեռն աջակցության շնորհիվ: Տեղեկագրի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են Օտարերկրյա Ներդրումների և Համագործակցության Առցանցիցային, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ Ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:*